30.06.26 - 30.06.26
16:00
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարան, 4-րդ հարկ, 403 ընթերցասրահ

Ս.թ. հունիսի 30-ին՝ ժամը 16:00-ին, ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանում տեղի կունենա Հայաստանի երիտասարդների շրջանում կատարված «Հայաստանի երիտասարդները անորոշության և հույսի խաչմերուկում» խորագրով սոցիոլոգիական հետազոտության արդյունքների ներկայացումն ու քննարկումը: Միջոցառումը կազմակերպվում է ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի, Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գրադարանի, «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնարկության ու Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ:

Հետազոտական աշխատանքի շնորհանդես-քննարկումը կվարի ք.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ **Արթուր Աթանեսյանը:**

Խոսնակներն են՝

- **Արթուր Մարտիրոսյան**, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ,
- **Միքայել Հովհաննիսյան**, ԵՊՀ միջազգային կապերի, զարգացման և նորարարությունների գծով պրոռեկտոր,
- **Արթուր Մկրտիչյան**, փ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան,
- **Մարինա Գալստյան**, ս.գ.թ., գրքի հեղինակ, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի ներկայացուցիչ:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am